

**ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԱՏՆԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈՒՈՒՄԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ  
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ**

**Մ. Ա. ՄՈՒՐԱԳՅԱՆ**

Հայ-ռուսական դարավոր բազմաբնույթ առնչություններում առանցքային նշանակություն ձեռք բերած առևտրատնտեսական հարաբերությունները ոչ միայն ընդհանրապես զգալիորեն նպաստեցին ռուսաց պետության արևելյան քաղաքականության կենսագործման և խորացման, հայերի նկատմամբ օրյեկտիվորեն քարյացական դիրքորոշման համար, այլև դարձան հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման ձևավորման հիմնական գործոններից մեկը: Ընդհանրապես, համաշխարհային պատմության զարգացման ընթացքն աներկբայորեն վկայեց, որ առևտրատնտեսական փոխշահավետ հարաբերությունները բոլոր շրջափուլերում հիմնականում խաղացել են կարևորագույն դեր՝ ժողովուրդների ու պետությունների միջև վստահություն հաստատելու և ամրապնդելու համար: Հետևաբար, պատմագիտական առումով միանգամայն սխալ է թերագնահատել կամ առավել ևս անտեսել առևտրատնտեսական հարաբերությունների պատմականորեն կարևոր գործոնի դերը, այն դիտարկել սուկ առևտրավաշխատական, վաճառականության հարստացման ու միայն կապիտալներ դիզելու և շահույթներ ստանալու տեսանկյունից: Նրա պատմական ընդգրկման և նշանակության ոլորտը անհամեմատ ավելի լայն է, և իզուր չէ, որ արդեն Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո ու հատկապես 20-ական թթ. Վ. Ի. Լենինը մեծ տեղ հատկացնելով դրան՝ մատնանշում էր, թե տնտեսական կապերը սոցիալիստական պետության և կապիտալիստական աշխարհի միջև լուրջ և կարևոր գործոն լինելով՝ զգալիորեն նպաստում են ներհակությունների հաղթահարմանը, միջազգային-քաղաքական ու դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը: Այս միտքը հիմնավորելու համար մատնանշեմք, թե մեր միջուկային դարաշրջանում համայն մարդկությանը բոլորից շատ հուզող ու հրատապ նշանակություն ունեցող կայուն խաղաղության և ժողովուրդների միջազգային անվտանգության պահպանման իմաստով որքան կարևոր են առևտրատնտեսական կապերի հաստատումը և փոխշահավետ հարաբերությունների ընդլայնումը: Հետևաբար, գիտաքաղաքական կարևոր նշանակություն է ստանում ժողովուրդների և պետությունների միջև անցյալում հաստատված առևտրատնտեսական կապերի ու հարաբերությունների պատմության ուսումնասիրությունը: Այս առումով, քացառությամբ չեն կազմում հայ-ռուսական առևտրատնտեսական առնչությունները, որոնց լուսաբանման անհրաժեշտությունը թեև անվիճելի է, այնուհանդերձ, նա դեռևս չի ստացել իր պատշաճ, սպառիչ, հիմնարար մեկնությունը ռուսական խորհրդային պատմագրության մեջ: Եթե խորհրդահայ պատմագրությունը սույն պրոբլեմի ուսումնասիրության մարզում անցել է իրեն հասանելի գիտական ճանապարհի կեսը, ապա նույնը, դժբախտաբար, չի կարելի ասել ռուսական խորհրդային պատմագիտական մտքի ներկայացուցիչների մասին, մինչդեռ 18—19-րդ դդ. ռուսաց պատմագրության մեջ (Մ. Չուլկով, Ֆ. Սոյմոնով, Ս. Գլինկա, Ս. Սոլովյով) այդ հարաբերությունների պատմությունը արտացոլված է բավականաչափորեն:

Արդարության դեմ չմեղանչելու համար, սակայն, հարկ է նշել, որ վերոհիշյալ հարցը, այսուհանդերձ, որոշ չափով արտացոլվել է ռուս խորհրդային առանձին պատմաբանների աշխատություններում, որոնք քննարկելով 17—19-րդ դդ. Ռուսաստանի պատմության հարցերը, հպանցիկորեն տվել են նաև Չուլայի հայ առևտրական ընկերության և ռուսաց պետության միջև կնքված պայմանագրերի, Անդրկովկասում ընդհանրապես ու Արևելյան Հայաստանում մասնավորապես Ռուսաստանի կենսագործած տնտեսական քաղաքականության վերաբերյալ իրենց գնահատականները: Թեև 20—30-ական թթ. խորհրդային պատմագրության մեջ պատմաքաղաքական գործընթացների լուսաբանման, կարևորագույն դեպքերի ու իրադարձությունների գնահատման ասպարեզում դեռևս որոշակի տեղ ունեն և նշանակալի

դեր էր խաղում Մ. Ն. Պոկրովսկու առաջադրած առևտրական կապիտալի ամենագոր լինելու մասին պատմագիտական համակարգը, այսուհանդերձ դա էլ չօգնեց, որպեսզի վերջինին աներկայացուցիչները ոչ միայն լուսաբանեն, այլև գեթ հպանցիկորեն նշեն առևտրական պայմանագրերի առկայության, էլ չենք ասում վերլուծության և նշանակության վերաբերյալ: Մ. Ն. Պոկրովսկին կամ թերագնահատեց հայ-ռուսական առևտրատնտեսական հարաբերությունների նշանակությունը կամ էլ, որը ավելի է հավանական, պարզապես անտեղյակ էր ռուսաց պետության և Պարսկաստանի՝ հայաքաղաք Ջուղայի հայկական առևտրական ընկերության միջև կնքված պայմանագրերի մասին:

Գիտական ուսումնասիրությունների այս մարզում, թերևս, որոշակի տեղաշարժեր կատարվեցին 40-ական թթ. վերջին և 50-ական թթ. սկզբին, երբ հրատարակվեցին խորհրդային պատմաբաններ Մ. Կ. Ռոժկովայի և Վ. Պ. Լիսուցկի աշխատությունները: Միջին Արևելքում Ռուսաստանի կենսագործած տնտեսական քաղաքականությանը նվիրված Մ. Կ. Ռոժկովայի ուշագրավ մենագրությունը, որն ընդգրկում է 19-րդ դ. երկրորդ քառորդը, հնարավորություն է ընձեռում որոշակիորեն պատկերացնել նրա հետապնդած տնտեսական նպատակները Արևելյան Հայաստանում՝ Ռուսաստանին միավորվելուց հետո: Արդարև է, որ առևտրատնտեսական հարաբերությունների նշանակության գնահատման միջոցով կարելի է կոսմոսի ու հիմնականում պատկերացնել, թե ինչպիսին է հեղինակի դիրքորոշումը Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու վերաբերյալ: Հայտնի է, որ պատմագիտական ձևով զարգացման այդ փուլում դեռևս տիրապետող էր «փոքրագույն շարիքի» համակարգը, որը թեև ոչ ռուս ժողովուրդների՝ Ռուսաստանի կազմի մեջ մտնելու, նրա հետ միանալու և միավորվելու մեջ տեսնում էր արդեն դրական գծեր և դրանով իսկ կատարում որոշ առաջընթաց քայլ, բանգի նախորդ շրջանում խորհրդային պատմաբանները ղեկավարվում էին այսպես կոչված «քաջարձակ շարիքի» տեսակետով, այսուհանդերձ լրիվ գիտական չէր, որն էլ արտացոլվեց Ռոժկովայի աշխատությունում: Հեղինակը ծանրության կենտրոնը դնում է ինքնակալության՝ իր բնույթով գաղութային գործունեության, Արևելյան Հայաստանը հույժ արտահանող երկրամաս դարձնելու, տնտեսապես շահագործելու վրա և ավելի քիչ անդրադառնում օրյեկտիվորեն դրական նշանակություն ունեցող գործոններին, որոնք իրոք առկա էին արևելահայության սոցիալ-տնտեսական կացությունում: Իր թեզը հիմնավորելու համար Ռոժկովան հենվում է Ռուսաստանի ֆինանսների մինիստր Կանկրիցի գեներալների ու ծրագրերի վրա, որտեղ ցարական չինովնիկը ուղղակի, բացեփառ հայտարարում էր, թե Արևելյան Հայաստանը պետք է դիտել որպես գաղութ ու ղեկավարվել դրանից բխող քաղաքական և տնտեսական բոլոր հետևանքներով: Սակայն Կանկրիցը, բնականաբար, չէր կարող լիովին հասնել նպատակահարցումներին, քանզի Արևելյան Հայաստանը, դառնալով կայսրության անբաժանելի մասը, ընդգրկվելով ու ներքաշվելով ռուսական տնտեսության ոլորտը, աճխուսափելիորեն, թեև, անշուշտ, անհամեմատ ավելի դանդաղ, ընթանալու էր զարգացման նույն ուղիով: Անդրկովկասը ընդհանրապես և Արևելյան Հայաստանը մասնավորապես աստիճանաբար մտնում էր կապիտալիստական հարաբերությունների ոլորտը, որը օրյեկտիվորեն դրական երևույթ էր հայ իրականության մեջ:

Ռոժկովայի վկայությամբ ռուսաց արքունիքը, ելնելով իր տնտեսության շահերից և այն զարգացնելու հետամտ նպատակներից, ցուցաբերում էր մեծ հետաքրքրություն Արևելյան Հայաստանում քամրակագործության, մետաքսի մշակման, հայկական որդան կարմիրի զարգացման նկատմամբ և այդ ուղղությամբ ձեռնարկում էր որոշակի քայլեր: Հեղինակը իրավամբ նշում է, որ ռուսական կառավարությունը մինչ Անդրկովկասում վերջնական ամրապնդվելը արդեն ուշադրությունը սևեռել էր առավել զարգացած ճյուղի՝ քամրակի մշակության վրա, որը բավարարում էր ոչ միայն տեղական շուկան, այլև արտահանվում էր և հետևաբար կարող էր հույժ ծառայել Ռուսաստանի համար: Միանգամայն ճիշտ է Ռոժկովան, թե «Հաղթական պատերազմը Իրանի հետ և 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրի կնքումը ռուսաստանյան կայսրության համար ստեղծեցին ամուր ստրատեգիական բազա Անդրկովկասում... Թուրքմենչայի պայմանագրի կնքումը... ռուս վաճառականներին դրեց բարենպաստ հատուկ պայմանների մեջ»<sup>1</sup>: Նա հենվելով ռուսական զանազան աղբյուրների վրա՝ նշում է, որ Երևանի շրջանում ստանում էին 59 հազար փուֆ հեղավոր քամրակ, Նախիջևանում՝ 6 հազար փուֆ: Մեկ այլ տվյալով 20-ական թթ. երկրորդ կեսին Երևանի շրջանից Թիֆլիս էր արտահանվում 70 հազար փուֆ քամրակ, Թուրքիա՝ 52 հազար փուֆ, իսկ Նախիջևանի շրջանից երկու ուղղություններով՝ 35 հազար փուֆ: Երրորդ աղբ-

<sup>1</sup> М. К. Рожкова. Экономическая политика царского правительства на Среднем Востоке во второй четверти XIX века и русская буржуазия, М.-Л., 1949, В. П. Лысцов. Персидский поход Петра I, 1722—1723, М., 1951.

<sup>2</sup> М. К. Рожкова, նշվ. աշխ., էջ 75:

յորի համաձայն Արևելյան Հայաստանից արտահանվում էր 36 հազար փոթ քամբակ<sup>3</sup>։ Ան-  
շուշտ, այս փաստը վկայում է քամբակի արտադրության ծավալի ոչ մեծ լինելու մասին, ա-  
կայն, ինչպես իրավացիորեն գտնում է Ռեդինակը, եթե հաշվի առնենք Ռուսաստանում քամ-  
բակամանության համեմատաբար թույլ զարգացած լինելու հանգամանքը և նկատի ունե-  
նանք, որ 20-ական թթ. կեսերին տարեկան առավելագույնը ներմուծվում էր ընդամենը 100  
հազար փոթից մի փոքր ավելի<sup>4</sup>, ապա պարզ կդառնա, թե որքան կարևոր նշանակություն ու-  
նեն Արևելյան Հայաստանում թեկուզ և այդքան քամբակի արտադրությունը Ռուսաստանի  
տնտեսության համար։

Եթե 17—18-րդ դդ. ռուսական թագավորներ Ալեքսեյ Միխայլովիչը և Պյոտր Առաջինը  
պայմանագրեր էին կնքում Ջուղայի հայ առևտրական ընկերության հետ և պարտավորեց-  
նում նրանց իրենց ձեռքի տակ եղած մետաքսը գերազանցապես արտահանել Ռուսաստան,  
մի կարևորագույն պատմական փաստ, որը դժբախտաբար անտեսել է Ռոժկովան, ապա  
Արևելյան Հայաստանը միացնելուց անմիջապես հետո ռուսաց կառավարությունը, ելնելով  
իր երկրի տնտեսության շահերից ու հայկական մարզը որպես հումքի աղբյուր օգտագործե-  
լու հեռամետ նպատակներից, ձեռնարկեց զանազան միջոցներ՝ ոչ միայն քամբակագործու-  
թյունը զարգացնելու, այլև դրա որակը բարձրացնելու ուղղությամբ<sup>5</sup>։ Իսկ ֆինանսների մի-  
նիստր Կանկրինի 1836 թ. կայսրին ներկայացրած զեկուցումը, որին ի դեպ կցված էին հայ-  
կական կարմիրներով մետաքսե գործվածքի նմուշներ, մեկ անգամ ևս հաստատում է վե-  
րոհիչալով։ Այդ է սպացուցում նաև Նիկոլայ 1-ինի մակագրությունը, որ մասնավորապես  
ասված էր. «Ձգտավետ կլիներ որդան կարմիրի հավաքումը կատարելագործել, եթե իրոք  
դրանից է կախված ներկի բարձրորակությունը»<sup>6</sup>։ Սակայն Ռոժկովան չխորացավ հարցի  
էության մեջ և փաստորեն անտեսեց Արևելյան Հայաստանի տեղական իշխանությունների  
վերաբերմունքը և դիրքորոշումը ցարական կառավարության կարգադրությունները կենսա-  
օրրոծելու ուղղությամբ։

Եթե Ռոժկովան Ռուսաստանի կենսագործած տնտեսական քաղաքականությունը Արե-  
վելյան Հայաստանում դիտարկել է նրա ռուսաց պետությանը միանալուց անմիջապես հետո,  
ապա 50-ական թթ. սկզբին լույս տեսած Լիսցովի գրքում արտացոլված է ավելի վաղ շր-  
ջանի հայ-ռուսական առևտրատնտեսական հարաբերությունների պտմությունը, որը միան-  
գամայն օրինաչափ է, քանզի նրա աշխատությունը նկիրված է Ռուսաստանի արևելյան քա-  
ղաքականության քաղադրամասերից մեկին՝ Պյոտրի կասայան արշավանքին։ Հեդինակը օբ-  
յեկտիվորեն պետք է ընդգրկեր այդ պրոբլեմը, մանավանդ որ ռուսաց կայսրը մեծ հետաքր-  
քրություն էր ցուցաբերում ոչ միայն Արևելքի երկրների հետ առևտրական կապերը ընդ-  
լայնելու հարցին, այլև 17-րդ դ. երկրորդ կեսին հայկական առևտրական ընկերության հետ  
կնքված պայմանագրերը վերակենդանացնելու և խթանելու գործին։ Խորհրդային պատ-  
մագրության մեջ Լիսցովը, թերևս, առաջիններից էր, որ իր մենագրության մեջ ուշադրու-  
թյունը սևեռեց այդ պրոբլեմին և ուսումնասիրեց Ջուղայի հայկական ընկերության հետ  
1667 և 1673 թթ. ցար Ալեքսեյ Միխայլովիչի արքունիքի կնքած առևտրական պայմանագր-  
երը։ Հատկանշական է, որ սույն հարցերը քննարկելիս ռուս խորհրդային պատմաբանը  
հիմք է ընդունել Չուլկովի աշխատությունը։ Հեմվելով հենց ռուս պատմաբանի վկայության  
վրա՝ Լիսցովը մատնանշում է, թե «...հայկական մի ընկերություն տարեկան Գյանջայից Հա-  
լեպ էր առաքում 900—1000 պարկ մետաքս, յուրաքանչյուր պարկը 400 ֆունտ կշռով...»<sup>7</sup>։

Հիմք ընդունելով ռուս մեկ այլ պատմաբան Սոյմոնովին, Լիսցովը գրում էր, թե ռու-  
սական կառավարությունը զանազան միջոցներով փորձում էր առևտրական կապերի մեջ  
ներգրավել արևելքի վաճառականներին, «...առաջին հերթին պարսկահայերին, որոնք մե-  
տաքսի գնման մեհաշնորհ ունեին Պարսկաստանում և նշանակալից դեր էին խաղում առև-  
տրական կապերում Արևելքի և Եվրոպայի միջև։ Պարսկահայերից ամենագործունյա և ա-  
մենահարուստ վաճառականները եղել են ջուլֆացիները, Սպահանի արվարձան Ջուլֆայի  
քնակիչները»<sup>8</sup>։ Ջուլֆայի (Ջուղայի) հայկական ընկերության հետ ռուսաց պետությունը  
շուրջ 8 տարվա ընթացքում (17-րդ դ. 60—70-ական թթ.) կնքեց երկու պայմանագիր։ Լու-  
սաբանելով պայմանագրի բովանդակությունը և կետերը՝ Ռեդինակը արձանագրում է, որ  
կողմերը ստանձնեցին որոշակի պարտականություններ. մասնավորապես՝ ռուսաց պետու-  
թյունը պարտավորվեց հայկական առևտրական ընկերությանը շնորհել նկատելի արտոնու-

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 111։

<sup>4</sup> Նույն տեղում։

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 112—118, 117։

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 117։

<sup>7</sup> В. И. Лисцов, *сзв.* աշխ., էջ 52։

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 56։

թյուններ, հատկացնել նավեր և ապահովել անվտանգ երթևեկություն, իսկ Ջուլֆայի վաճառականները պետք է դեպի Եվրոպա առևտուրը կատարեին Ռուսաստանի վրայով՝ հրաժարվել Թուրքիայով և այլ ուղիով Եվրոպա մեկնելուց, օտարերկրացիներին Պարսկաստանում հում մետաքս վաճառելուց, այլ ողջ հումքը առաքել Ռուսաստան<sup>9</sup>: Լիսցոնը սրանով ավարտում է ռուսաց պետության համար կարևոր նշանակություն ունեցող առևտրատնտեսական պայմանագրերի մեկնությունը, չնակտելով սակայն, որ այդ բանակցություններն արդեն դուրս էին եկել զուտ առևտրատնտեսական հարաբերությունների շրջանակներից և ձեռք բերել քաղաքական իմաստ, վկայելով հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման աստիճանական ձևավորման մասին: Լիսցոնի գրքում անտեսված է, թե ինչու 1667 թ. փոխառապետ պայմանագիրը փաստորեն լայն տարածում չգտավ և ըստ էության չիրագործվեց:

Թեև օրյեկտիվ և սուրյեկտիվ հանգամանքներով Լիսցոնի տեսադաշտից դուրս է մնացել այս ամենը, այնուհանդերձ նրա գիրքը չի կորցրել իր գիտական արժանիքը, մանավանդ որ հեղինակը լուսաբանել է Պյոտրի թագավորության տախիներին տեղի ունեցած հայկոուսական առևտրատնտեսական հարաբերությունների պատմությունը: Անշուշտ, ռուսաց կայսրը քաջատեղյակ էր ինչպես իր նախորդների կողմից հայ առևտրական ընկերության հետ կնքած պայմանագրերի, այնպես էլ հայ վաճառականների հմտությանն ու ձեռներեցությանը: Լիսցոնը գրում է, թե Պյոտրի քոլոր ջանքերը ուղղված էին Ջուլֆայի ընկերությանը հարկադրելու սյահպանել համաձայնագրի պայմանները: Դրա համար Սեմաուը 1711 թ մայիսի 2-ի հրամանագրով ոչ միայն հաստատեց նախկին առավելությունները, այլև հայերին շնորհեց նոր արտոնություններ, որոնց համաձայն նրանց իրավունք էր վերապահված նաև անմաքս քերել թանկարժեք քարեր ու մարգարիտ: Սակայն հայկական առևտրական ընկերությունը, ըստ Լիսցոնի, չկատարեց ստանձնած պարտավորությունը, որովհետև նրա ներկայացուցիչները Ռուսաստան քերելով քիչ մետաքս՝ ըստ էության շարունակում էին առևտուրը Հալեպի և Ջնյունիայի վրայով Եվրոպայի հետ<sup>10</sup>: Սակայն Լիսցոնը այս հարցում ևս, փաստորեն, չխորհանալով պորբլեմի էության մեջ՝ չի մեկնաբանում, թե ինչու այսպիսի արևտոնությունների պայմաններում էլ հայ առևտրական ընկերությունը գերադասում էր առևտուրը Եվրոպայի հետ, ևվազագույնի հասցնելով Ռուսաստանի հետ ունեցած առևտրատնտեսական կապերը: Հավանաբար, հայերին ձեռնտու էր շահավետ առևտուրը Եվրոպայի հետ, մանավանդ որ ճանապարհներն անվտանգ էին ու ապահով, մինչդեռ Ռուսաստանը այդ ժամանակ Բայթիկ ծով դուրս գալու նպատակով երկարատև հյուսիսային պատերազմի մեջ էր: Իսկ Արխանգելսկի ճանապարհը չափազանց երկար էր և նավարկելի տարվա մեջ սոսկ մի քանի ամիս:

Ընդհանրապես չի կարելի համաձայնել Պյոտր 1-ինի դեսպանորդ Ա. Վոլինսկու հետ, որի կարծիքով հայ վաճառականները, իբր, արհամարհում և չէին կատարում ստանձնած պարտավորությունները: Հայ վաճառականները պարզապես օգտագործում էին թե մեկ և թե մյուս ուղին, իրենց շահերին համապատասխան նախապատվությունը տալով մերթ այս, մերթ այն ճանապարհին: Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա վերջինս պատերազմի պայմաններում էլ ձգտելով ավելի ընդլայնել առևտրական կապերը Արևելքի հետ, նոր զիջումներ էր անում: Պյոտրը համառորեն չէր հրաժարվում իր ծրագրից, վերստին ամեն կերպ փորձելով իր կողմը գրավել հայկական առևտրական ընկերությանը: «Օտուով,—գրում է Լիսցոնը,— Պյոտրին առիթ՝ ներկայացավ այս հարցը դեռ ոչ միայն ջուլֆեցիների, այլև հենց շահի ու նրա կառավարության առջև»<sup>11</sup>: Հեղինակը նկատի ունի 1715 թ. Պարսկաստան մեկնած ռուսաց թագավորի դեսպանորդ Վոլինսկուն տրված հրահանգը, ըստ որի նա պետք է շահին համոզեր կարգադրելու իրեն հպատակ Ջուլֆայի հայերին իրենց ամբողջ հում մետաքսը առաքել Ռուսաստան: Վոլինսկուն կարգադրված էր նաև համոզել հենց իրենց՝ հայ վաճառականներին՝ օգտվելու առևտրի համար նպաստավոր ռուսական ջրային ճանապարհից, միաժամանակ ապացուցել, որ թուրքական այդքան երկար տարածքով ապրանքների փոխադրումը, այն էլ ուղտերով, իրենց համար շահավետ չէ: Վոլինսկին, Լիսցոնի վկայությամբ, չհասավ իր նպատակին: Երբ նա պարսկական արքունիքի առաջին մինիստրին տեղեկացրեց, որ ջուլֆեցիները չեն կատարում ռուսաց պետության հետ կնքած պայմանագիրը, պատասխանը եղավ, որ հայերին պետք չէ ստիպել, որովհետև եթե նրանք համոզվեն այդ ճանապարհի շահավետության մեջ, ապա առանց հարկադրանքի կընտրեն այդ ուղին: Նման պարագայում «...ռուսաց կառավարությունը,— վկայում է Լիսցոնը,— այնուամենայնիվ

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 56:

<sup>10</sup> Նույն տեղում:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 56—57:

որոշեց «հարկադրել» հայերին, 1719 թ. հունիսի 6-ի հրամանով Ջուլֆայի ընկերությունը զրկվեց բոլոր արտոնություններից և առավելություններից, այսուհետ հայերը կարող էին Ռուսաստանում առևտուր անել բոլոր օտարերկրացիներին հավասար՝ վճարելով մաքսեր համաձայն առևտրական կանոնագրի»<sup>12</sup>: Սակայն արդեն հաջորդ տարի այդ հրամանը վերանայվեց, քանզի «Հայերը խոստացան գործել պայմանագրի համաձայն, դրա համար էլ ռուսաց կառավարությունը 1720 թ. վերականգնեց հայ վաճառականների նախկին որոշ արտոնությունները՝ մասնավորապես փոխադրվող ապրանքներից արտոնյալ մաքսեր գանձելը»<sup>13</sup>:

Ինչպես տեսնում ենք, Ռուսաստանի կառավարող շրջանները չէին նահանջում իրենց ձգտումներից՝ փորձելով ամեն կերպ սիրաշահել ու իրենց կողմը գրավել հայկական առևտրական ընկերությանը: Այվելին, 1728 թ. մայիսի 10-ի հրամանով հայկական ընկերության վաճառականներ Լուկա Իլյինը, Ֆիլիպ Մաքսիմովը և Իվան Եֆրեմովը հրավիրվեցին Սեֆնատ, ուր վերստին առաջարկեցին հում մետաքսը գրեթե ամբողջովին վաճառքի առաքել Ռուսաստանի<sup>14</sup>: Այսպիսի հետաքրքիր և ուշագրավ տեղեկություններ հայտնելուց հետո ավելի քան տարօրինակ է ու զարմանալի Լիսցովի եզրակացությունը հայ-ռուսական առևտրատնտեսական հարաբերությունների մասին, որի հետ, մեղմ ասած, համաձայնել չի կարելի, քանզի հեղինակի անհիմն կարծիքով «Ջուլֆայի հայերը ռուս վաճառականներին պատճառում էին մեծ վնասներ և նեղություն, որոնք... իրենց բանասրկություններով գրեթե ամբողջ ռուսական վաճառականությանը վանեցին»<sup>15</sup>: Հազիվ թե դա հնարավոր լիներ, որովհետև ռուս վաճառականների շահերը պաշտպանում էր մի հսկայական կայսրություն: Պետականությունից զրկված և ընդամենը պարսկական շահի քիչ թե շատ հովանավորությունը վայելող հայկական առևտրական ընկերության ուժերից վեր էր, գրեթե անհնարին, վնաս պատճառել նրանց: Հավանաբար ռուս վաճառականներն ի վիճակի չէին այդ ուղրտում մրցակցել Ջուլայի հայ վաճառականների հետ, որոնք ունեին հարուստ փորձ, անհամեմատ ավելի լայն կապեր ու, իհարկե, ճանաչված էին ինչպես Ռուսաստանի սահմաններից հեռու, այնպես էլ պարսկական երկրից դուրս:

Հայ-ռուսական առևտրատնտեսական հարաբերություններին անդրադառնել է նաև ռուս խորհրդային հետազոտող Ե. Վ. Սպիրիդոնովան, որն այդ պրոբլեմը քննարկել է սոսկ Պյոտրի տնտեսական քաղաքականության և նրա տնտեսական հայացքների լուսաբանման կապակցությամբ<sup>16</sup>:

Թեև նա չի նշում Նոր Ջուղա անունը, այնուհանդերձ, հեղինակը, անկասկած, Ալատի ունի հենց այնտեղի հայկական առևտրական ընկերությունը: «Ի լրացումն Ալեքսեյ Միխայլովիչի՝ հայ վաճառականներին Ռուսաստանում մետաքսի վաճառքի համար շնորհած մեծաշնորհի,— գրում է Սպիրիդոնովան,— Պյոտրը նրանց սովեց մի շարք արտոնություններ ևս: Հայերին տրամադրվեց Ռուսաստանում պարսկական ապրանքների ազատ առևտրի և այլ երկրներ ռուսական քաղաքների միջով ազատ երթևեկելու իրավունք: Իրենց տրված տարբեր արտոնությունների դիմաց նրանք պարտավորվում էին հում մետաքս մատակարարել ռուսական մետաքսի մանուֆակտուրաներին»<sup>17</sup>: Հարկ է նշել, որ Ալեքսեյ Միխայլովիչի կառավարությունը հայ առևտրական ընկերության հետ պայմանագիր կնքեց այն ժամանակ, երբ արդեն վերացվել էին անգլիական վաճառականներին նախկինում տրված արտոնությունները: «1649 թ. Ալեքսեյ Միխայլովիչը,— այս կապակցությամբ գրում է Սպիրիդոնովան,— չեղյալ հայտարարեց անգլիական վաճառականների մեծ արտոնությունները, որոնցից նրանք օգտվում էին (առիթ) ծառայեց անգլիական թագավորի մահապատիժը, իրականում դա մոսկովյան վաճառականների խնդրանքի արդյունքն էր)»<sup>18</sup>: Հայ առևտրական ընկերությանը ընձեռված արտոնությունների նպատակը հստակ պատկերացնելու համար արձանագրենք, որ Նոր Ջուղայի վաճառականներին առավելություններ արտոնող պայմանագիրը կնքվեց հենց «Առևտրական նոր կանոնագրի» ընդունման տարում՝ 1667 թվականին, ուր «...վատ կերպով արտահայտված են օտարերկրյա մրցակցությունից վաճառականներին

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 67:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 58:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 59:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 68:

<sup>16</sup> E. B. Спиридонова. Экономическая политика и экономические взгляды Петра I, М., 1952, с. 224.

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 224:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 49:

(ոուս—Մ. Մ.) հովանավորելու և պաշտպանելու գաղափարները»<sup>19</sup>։ Ստացվում էր շատ հետաքրքիր պատկեր՝ մի կողմից ցարական կառավարությունը փաստորեն արտոնություններից զրկում էր անգլիական առևտրականներին, սահմանում բարձր մաքսեր, սահմանափակում օտարերկրյա առևտուրը և ելնելով ուս վաճառականների ցանկությունից ու շահերից՝ կենսագործում էր ակնհայտ հովանավորչական քաղաքականություն, իսկ մյուս կողմից, կարծես ընդունված առևտրական կանոնագրի ոգուն հակառակ, բարյացակամորեն տրամադրվում Ջուդայի հայկական ընկերության նկատմամբ։ Հավանաբար, հայերին արտոնություններ շնորհելու պատճառներից մեկն էլ հենց օտարերկրյա վաճառականների ապրանքների մուտքի կանխարգելքն էր։

Դժվարացնելով և ըստ էության փակելով օտարերկրյա վաճառականների անարգել մուտքը Ռուսաստան՝ Ալեքսեյ Միխայլովիչի և Պյոտր Մեծի կառավարությունը միաժամանակ լայնորեն բացում էին բոլոր դռները հայ վաճառականների առաջ։

Հատկանշական է, որ Սպիրիդոնովան նույնպես բարձր գնահատելով Օրդին-Նաշչուկինին՝ որպես պետական խոշոր գործիչ, տաղանդաշատ դիվանագետ ու ջերմ հայրենասեր, 17-րդ դ. Ռուսաստանի ամենամեծ հովանավոր ու կրթված, խելացի ու եռանդուն մարդկանցից մեկը<sup>20</sup>, միաժամանակ անտեսեց մի կարևոր փաստ նրա արտաքին-քաղաքական գործունեության ասպարեզում՝ կապված պարսկահայերի հետ կնքած պայմանագրի հետ, որի ստորագրման մեջ անուրանալի մեծ էր այդ հետևուտե քաղաքագետի դերը։

Թեև Սպիրիդոնովան և Լիսցովը արձանագրում են հայ ժողովրդի ազատագրական պայքարի ու Ռուսաստանից ակնկալվող օգնության մասին, այնուհանդերձ, վերջիններս հայրենասեր առևտրատնտեսական և քաղաքական հարաբերությունները դիտարկում են մեկուսացված, այդ ամենի մեջ չտեսնելով ընդհանուր սերտ կապ. նրանց պատկերացմամբ դերանք զարգանում էին միմյանցից անկախ, առանց փոխներգործության, մինչդեռ իրականում դրանք կազմում էին ընդհանուր շրջայի օրինաչափ օղակները և օբյեկտիվ բաղադրամասերը։ Հետևաբար առևտրատնտեսական կապերը և քաղաքական հարաբերությունները անհրաժեշտ է դիտարկել միահյուսված, որպես ընդհանուր ամբողջական գործընթաց, որոնցից յուրաքանչյուրը տարբեր մակարդակով և չափով հետևողականորեն նպաստում էր հեռանալու ու վերջնական նպատակին։

Նոր Ջուդայի հայկական առևտրական ընկերության մասին հպանցիկորեն հիշատակված է ակադեմիկոսներ Հ. Ա. Օրբելու, Վ. Վ. Ստրուվեի և պրոֆ. Պետրուշևսկու խմբագրությամբ «Իրանի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև 18-րդ դ. վերջը» սովաբաժնավ կոլեկտիվ աշխատությունում, որի հեղինակները ինչպես այդ, այնպես էլ հայ ազատագրական շարժմանն ու Ռուսաստանի նկատմամբ ունեցած ակնկալիքներին անդրադարձել են սուկ այնքանով, որքանով այն կապված է եղել Իրանի պատմության հետ։ Նրե՛րանք մատնանշում են, որ երկրում խոշոր վաճառականների դիրքերը բավականաչափ ամուր էին ու պատվաբեր, քանզի Իրանի առանձին տիրակալներ, հատկապես Ծահ-Արաղը, ելնելով գանձարանը հարստացնելու ձգտումից, հովանավորում էր նրանց, բարենպաստ պայմաններ ստեղծում ինչպես ներքին, այնպես էլ արտաքին առևտուրը զարգացնելու համար։ Ընդ որում, աշխատության հեղինակները եզրակացնում են, որ արտաքին առևտուրը «...գտնվում էր ոչ թե պարսիկների, այլ քրիստոնյա վաճառականների (հայերի, աքվեի քիչ հոլանդացիների, անգլիացիների և ֆրանսիացիների) ձեռքին, որոնք առևտուր էին անում Ռուսաստանի ու Արևմտյան Եվրոպայի երկրների հետ... ճիշտ այնպես, ինչպես Թուրքիայում այդ նույն ժամանակ արտաքին առևտուրը գտնվում էր քրիստոնյաների (հույների, հայեր, եվրոպացիներ) ու հրեաների ձեռքին»<sup>21</sup>։ Նրանց հաշվարկներով Նոր Ջուդայի հայ հարուստ վաճառականների ունեցվածքը կազմում էր 60 հազարից—200 հազար թուման, իսկ հայկական առևտրական ընկերությունը «...օգտվում էր Իրանից մետաքս արտահանելու մենաշնորհից։ Ծահը այդ հայերին տալիս էր դիվանագիտական հանձնարարականներ քրիստոնյա երկրների համար, ինչպես նաև օգտագործում նրանց որպես սեփական պայմանադիր կողմերի, նրանց միջնորդությամբ վաճառելով Եվրոպայում մետաքս գործվածքներ, դիպակ, թավիշ... Նոր Ջուդայի հայերը գանձարանին տարեկան վճարում էին մոտ 580 թուման հարկ։ Բացի հայ վաճառականներից հում մետաքս արտահանելու իրավունք ունեին միայն անգլիական և հոլանդական ֆակտորիաները»<sup>22</sup>։ Նրանց միջև, ան-

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 58։

<sup>20</sup> Ե. Վ. Սպիրիդոնովա, նշվ. աշխ., էջ 56։

<sup>21</sup> «История Ирана с древнейших времен до конца XVIII века», под ред. акад. В. В. Струве, акад. Н. А. Орбеля, проф. И. П. Петрушевского, Л., 1958, с. 289.

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 289։

շուշտ, ընթանում է սուր պայքար և մրցակցություն, որը ավարտվեց հուլանդացիների հաղթանակով, որոնք 17-րդ դ. 70-ական թթ. տարեկան Եվրոպա էին արտահանում 500 հազարից մինչև 800 հազար լիվր գումարով հում մետաքս (մոտավորապես 11 հազարից մինչև 18 հազար թունան)<sup>23</sup>: Այսպիսով, հուլանդացիներին հաջողվեց պարսկական արքունիքից ստանալ զիջումներ հում մետաքսի արտահանման ասպարեզում, մինչդեռ Ռուսաստանում նույնպիսի արտոնություններ ստանալու հուլանդացիների գործադրած թուրք ջանքերը հաջողություն չունեցան, քանզի ռուսաց կառավարությունը մերժելով նրանց՝ նախապատվությունը տվեց Նոր Զուլֆայի հայկական առևտրական ընկերությանը: Խորհրդային պատմաբանների կողմից ստվարածավալ աշխատության գիտական արժանիքն այն է, որ նրանք փաստորեն առաջիններից ընդգծեցին հայ վաճառականների՝ առևտրական բուրժուազիայի ոչ միայն հետաքրքրությունը, այլև ակտիվ մասնակցությունը հայ ազատագրական շարժումներին, Ռուսաստանի նկատմամբ ունեցած ակնկալիքներին: «Այդ ժամանակ,— գրում են նրանք,— ամբարշտվեցին Ռուսաստանի տնտեսական և կուլտուրական կապերը Վրաստանի և Հայաստանի հետ: Հայ վաճառականները ոչ միայն բուն Հայաստանում, այլև Իրանում ակտիվագույն մասնակցություն ունեցան հայ ժողովրդի ազատագրական շարժման մեջ, իրենց թուրք հույսերը կապելով կրոնակից, տնտեսապես և քաղաքականապես ամրացող Ռուսաստանի հետ»<sup>24</sup>:

Հայ-ռուսական առևտրատնտեսական հարաբերությունների պատմության լուսաբանման տեսանկյունից և աղբյուրների, փաստավավերագրերի նյութառատության, բազմաթիվ ու բազմապիսի մենագրությունների օգտագործման առումով, ուշագրավ գիտական եզրահանգումներով աներկբայորեն աչքի է ընկնում և առանձնանում Ն. Գ. Կուկանովայի մենագրությունը<sup>25</sup>: Հեղինակը ուսումնասիրել է ինչպես նախահեղափոխական, այնպես էլ խորհրդային ժամանակաշրջանի ռուս պատմաբանների հետազոտությունները, նրա տեսադաշտից չեն վրիպել նաև խորհրդահայ պատմաբաններ Ա. Ռ. Հովհաննիսյանի, Ա. Գ. Հովհաննիսյանի, Մ. Գ. Ներսիսյանի, Վ. Բայրությանի, Ս. Վ. Տեր-Ավետիսյանի արժեքավոր, հայ-ռուսական հարաբերությունների պատմության շատ կնճոտ հարցեր լուսաբանող մենագրությունները, որոնք զգալիորեն օգնել են նրան պրոբլեմ ուսումնասիրել ու ներկայացնել գիտական քարձր ու պատշաճ մակարդակով: Սակայն, հավանաբար հայերենի չիմացության պատճառով, Ն. Գ. Կուկանովայի տեսադաշտից դուրս են մնացել խորհրդահայ պատմաբանների մայրենալեզու աշխատությունները, որոնց օգտագործումը հնարավորություն կընձեռներ նրան էլ ավելի խորացնելու ուսումնասիրության շրջանակները: Այսուհանդերձ, ի տարբերություն մյուս ուսումնասիրությունների, Կուկանովայի մենագրության մեջ հայ-ռուսական առևտրատնտեսական հարաբերությունները լուսաբանված են խորությամբ և լայնությամբ: Գրքի հեղինակը քաջ գիտակցելով Զուլայի հայ առևտրական ընկերության կարևոր դերը, աշխատության մեջ առանձնացնում է հատուկ գլուխ և բավականաչափ մանրամասնորեն ներկայացնում ռուսաց պետության և ընկերության փոխհարաբերությունները՝ սկսած պայմանագրերի կնքման դրդապատճառներից, նրանց թուվանդակությունից ու վերջացրած դրանց կոնկրետ նշանակությամբ: Ռուսական խորհրդային պատմագրության մեջ Կուկանովան փաստորեն առաջին անգամ մանրակրկիտ ուսումնասիրեց և վերլուծության ենթարկեց հայ-ռուսական առևտրատնտեսական հարաբերությունների ամբողջական պատմությունը: Զսահմանափակվելով Զուլայի հայ առևտրական ընկերության հետ Ռուսաստանի կնքած պայմանագրերի լուսաբանմամբ, նա ընդլայնելով հետազոտության շրջանակները, այն հասցրեց, թեև ավելի նվազ չափով և ոչ այդքան խորությամբ, մինչև 18-րդ դ. առաջին կեսը, արձանագրելով, որ Թուրքմենչայի պայմանագրի կնքումից և Արևելյան Հայաստանի միացումից հետո էլ այդ առնչությունները շարունակվում էին ռուս-իրանական հարաբերությունների շրջանակների ներքո:

Կուկանովայի աշխատության գիտական արժանիքներից մեկն էլ այն է, որ նա չի քավարարվել միայն Զուլայի հայկական առևտրական ընկերության և ռուսաց պետության միջև կնքված պայմանագրերի լուսաբանմամբ, այլ նշել է նաև, որ Իրանի առանձին քաղաքներում, մասնավորապես Ագուլիսում քնակվող հայ վաճառականները նույնպես առընչվել են մոսկովյան երկրի հետ, որն էլ ավելի էր ընդլայնում և խորացնում հայ-ռուսական առևտրատնտեսական հարաբերությունները: Այսուհանդերձ, հեղինակը, հասկանալի պատճառով, ուշադրությունը սևեռում է Զուլայի հայկական առևտրական ընկերության հետ Ռու-

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 289:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 289:

<sup>25</sup> Н. Г. Кукуанова. Очерки по истории русско-иранских торговых отношений в XVII—первой половине XIX века, Саранск, 1977.

աստանի առնչություններին, քանզի ակնհայտ էր նրա առավելությունը մյուսների նկատմամբ: Չէ որ հայաքաղաքի վաճառականները ճանաչված էին ոչ միայն Իրանում, այլև նրա սահմաններից դուրս՝ Ռուսաստանում, Արևմտյան Եվրոպայում, Թուրքիայում: Արձանագրելով Ջուղայի հայկական առևտրական ընկերությանը պարսկական արքունիքի շնորհած արտոնությունների և մետաքսի վաճառման մենաշնորհ իրավունքի փաստերը, Կուկանովան միաժամանակ իրավացիորեն նկատում է, որ նման առավելություններից օգտվում էր միայն մեծահարուստ վաճառականությունը, իսկ շարքային հայ բնակչության, աշխատավորության վիճակը ծանր էր ու անմխիթար: Ավելին, հեղինակը հենվելով փաստավավերագրերի, ռուս և օտարագրի նշանավոր ճանապարհորդների՝ հիմնականում արժանահավատ վկայությունների վրա, անժխտելիորեն ապացուցում է, որ անգամ այդ արտոնված վաճառականների անձի և գույքի ապահովությունը միշտ չէ, որ եղել է երաշխավորված: Ահա ինչու հայ առևտրավաշխատական և արդյունաբերական բուրժուազիան ձգտում էր իր հայրենիքը տեսնել անկախ և ազատ, որի համար էլ նա հաճախ հանդես էր գալիս հայրենասիրական գաղափարներով, միաժամանակ ձգտելով գլխավորել հայ ժողովրդի ազատագրական շարժումը և պայքարը: Դա մեկ անգամ ևս հավաստում է պատմական այն ճշմարտությունը, որի համաձայն հայ-ռուսական առևտրատնտեսական կապերը սերտորեն միահյուսված են քաղաքական առնչությունների հետ, և այդ ամենը պետք է դիտարկել միասնության և ամբողջության մեջ: Մեր համոզմամբ, ինչպես արդեն նշվեց, հնարավոր չէ սպառիչ ներկայացնել հայ-ռուսական առևտրատնտեսական հարաբերությունները՝ առանց լուսաբանելու նրանց քաղաքական կապերը, նմանապես անհնարին է վեր հանել հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման ակունքները և գործոնները՝ առանց քացահայտելու տնտեսական առնչությունները: Հեղինակը փաստորեն անտեսել է այս կարևորագույն պատմաքաղաքական փաստը, նույնիսկ չի էլ նշում Թուրքմենչայի պայմանագրի նշանակությունը: Փաստորեն Կուկանովան ևս Ջուղայի հայ վաճառականների կապերը մոսկովյան պետության հետ լուսաբանում է քացատապես առևտրատնտեսական հարաբերությունների լույսի ներքո, անտեսելով դրա նշանակությունը հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման ճևարման գործում: Մինչդեռ հենց Կուկանովայի վկայությամբ ռուսագ պետությունը Ջուղայի հայ առևտրական ընկերության հետ վերջինս համար շահավետ և արտոնյալ պայմանագրեր կնքելով՝ հետապնդում էր ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական՝ Թուրքիային թուլացնելու հեռամետ նպատակներ:

Ն. Գ. Կուկանովան Ալեքսեյ Միխայլովիչի թագավորության տարիներին Ջուղայի հայ ընկերության հետ կնքած պայմանագրերի և Պյոտրի գահակալության ընթացքում այդ հարկի վերաբերյալ ընդունված հրամանագրերի միջև տեսնում է ընդհանուր կապ ու հաջորդականություն, որը մեկ անգամ ևս վկայում է, թե որքան մեծ տեղ էր հատկացվում Իրանի հետ առևտրատնտեսական հարաբերություններին ընդհանրապես, մետաքսի ներմուծմանը և վաճառքին մասնավորապես: Կուկանովայի մենագրությունում լուսաբանված են ոչ միայն հայ-ռուսական առևտրատնտեսական կապերը, Ռուսաստանի ու Իրանի հարաբերությունները, այլև տրված են հետաքրքիր տեղեկություններ շահի կողմից հայերին Իրան բռնագաղթեցնելու, Ջուղայի հայկական առևտրական ընկերությանը հուսմետաքսի մենաշնորհի իրավունք տալու նպատակների մասին: «Ծախ-Արասը հայերին չէր հարկադրում փոխելու կրոնը: Նա նույնիսկ արգելում էր հայերին ընդունել մահմեդականությունը, ասելով՝ թե մի հայ ինձ ավելի շատ հարկ է վճարում, քան 10 մահմեդական»<sup>26</sup>: Սակայն առկա էր ոչ պակաս մի այլ ծանրակշիռ պատճառ ևս՝ մահմեդական վաճառականության մուտքը քրիստոնյա Արևմտյան Եվրոպա կապված էր որոշակի բարդությունների և դժվարությունների հետ, մինչդեռ հայ վաճառականները ունեին լայն ճանաչում և կրոնակից էին եվրոպացիներին, որը այդ դարաշրջանի համար, անշուշտ, ուներ ստանցքային նշանակություն: Բավական է ասել, որ այն բանից հետո, երբ Արաս 1-ինը մետաքսի մենաշնորհի իրավունքը արտոնեց հայկական առևտրական ընկերությանը, Վենետիկի խորհուրդը որոշում կայացրեց որոշ չափով կրճատել Իրանից առաքվող մետաքսի համար սահմանված հարկը<sup>27</sup>: Հենվելով խորհրդահայ պատմաբան Ս. Վ. Տեր-Ավետիսյանի՝ Նոր Ջուղայի պատմությանը նվիրված աշխատության վրա, Կուկանովան նույնպես նշում է, որ արդեն 16-րդ դ. հայ վաճառականները առևտրի ասպարեզում կարևոր միջնորդներ էին Արևելքի ու Արևմուտքի միջև<sup>28</sup>: Հատկապես հատկանշական է հայ վաճառականների առևտրական կապերը Հոլանդիայի հետ, քանզի վերջինս կարևոր դեր էր խաղում համաշխարհային կոմերցիայում: Այսպես, 1660 թ.

<sup>26</sup> Ն. Գ. Կուկանովա, նշվ. աշխ., էջ 88:

<sup>27</sup> С. В. Тер-Аветисян. Город Джуга, Тблякся, 1938, с. 88.

<sup>28</sup> Ն. Գ. Կուկանովա, նշվ. աշխ., էջ 88:



Ամստերդամում արդեն գոյություն ունեին հայերին պատկանող 60 տներ, նրանց մեծ մասը դուրս էր եկել Իրանից<sup>29</sup>։ Կուկանովյան լայնորեն օգտագործում է եվրոպական ճանապարհորդների՝ մասնավորապես Օլեարիի, Տավերնյեի, Շարդենի, Կանտարիների, հիմնականում հավաստի տվյալները, հետաքրքիր ու արժեքավոր գնահատականները։

Կուկանովյայի մեծագրությունում վեր են հանված այն բոլոր օբյեկտիվ գործոնները, որոնք ի վերջո հնարավոր դարձրին պայմանագրերի կնքումը։ Ընդ որում, մանրամասնորեն քննարկվում են համաձայնագրերի կետերը առանձին-առանձին, միաժամանակ մեկնաբանվում են դրանց ընդհանուր թուլանդակությունը և հեմվելով այդ ամենի վրա՝ անտարկելիորեն հիմնավորվում այդ կարևորագույն փաստաթղթերի շահավետությունը թե Ռուսաստանի, թե Ջուդայի հայ ընկերության համար։ Մեկնաբանված են նաև վիճելի պրոբլեմները և փոխադարձ հավակնությունները, մասնավորապես Ռուսաստանը մեղադրում էլ հայկական ընկերությանը այն բանում, որ նրա ներկայացուցիչները խախտում էին պայմանագրերը և ամբողջ հույսը չէին արտահանում Ռուսաստան, շարունակում էին վերստին օգտվել Հայ-Ջմյուռնիա ուղուց։

Հայ վաճառականները շահագրգռված էին առևտուր անել Ռուսաստանի, առավել ևս նրա տարածքով Արևմտյան Եվրոպայի հետ 17-րդ դ. երկրորդ կեսին, որովհետև թուրքական քաղաքներով ուղևորվել եվրոպական երկրներ չափազանց վտանգավոր էր թուրք-վեներտիկյան պատերազմի պատճառով։ Բացի այդ Ռուսաստանի վրայով Եվրոպայի հետ կապվելը նպատակահարմար էր երթուղու կարճ լինելու տեսակետից։

Ընդհանրապես հայ առևտրական ընկերության ներկայացուցիչները օգտվում էին թե մեկ և թե մյուս ուղուց ու եթե մերթ ընդ մերթ գերադասում էին Եվրոպական ուղին, ապա նաև այն պատճառով, որ 1673 թ. պայմանագրով Ռուսաստանը փաստորեն այլևս չէր երաշխավորում ոչ նրանց անձի անվտանգությունը, ոչ էլ հույսի վնասի փոխհատուցումը։ Հայ վաճառականները առանձին դեպքերում նախապատվությունը տալիս էին Հայեաֆ-Ջմյուռնիա ուղուն, որովհետև նրանք կարող էին Արևմտյան Եվրոպայում գնել և Ռուսաստան ու Իրան առաքել թե քանակի և թե որակի իմաստով անհամեմատ ավելի շատ ապրանքներ ու թանկարժեք իրեր, որպիսիք անհնար էր ձեռք բերել Ռուսաստանում, եթե նկատի չուներանք մեծ պահանջարկ ունեցող հոչակավոր ռուսական մորթիները։ Թեև Ջուդայի հայ առևտրական ընկերությունը միշտ չէ որ ողջ մետաքսը արտահանում էր Ռուսաստան, այնուհանդերձ առաքված ապրանքը հասնում էր իր ժամանակի համար մեծ ծավալի ու վկայում հայ-ռուսական առևտրատնտեսական լայն ու նորմալ կապերի մասին։ Կուկանովյայի տվյալները վերցված են ռուսական արխիվներից, ունեն սկզբնաղբյուրի նշանակություն ու հավաստիություն։ «Հայ վաճառականները,— գրում է նա,— 1678 թ. Արխանգելսկի վրայով արտասահման առաքեցին 1170 փութ հում մետաքս, իսկ 1690 թ. 1905 փութ, 1691 թ. (Նովոգորոդի վրայով)՝ 1170 փութ, 1695 թ.՝ 2292 փութ հում մետաքս»<sup>30</sup>։

Կուկանովյայի տեսակետով Ռուսաստանը 1667 և 1673 թթ. կնքած պայմանագրերով լուրջ զիջում էր կատարում Ջուդայի հայկական ընկերությանը և սկզբունքորեն նահանջում իր իսկ կողմից նույն 1667 թ. ընդունած արտաքին առևտրի համար սահմանված կանոնադրից։ Սակայն այդ նահանջը և զիջումը, ինչ խոսք, ոչ միայն չէր հակասում, այլև լիովին բխում էր նրա շահերից, նպաստում գանձարանի հարստացմանը։ Հայ-ռուսական առևտրատնտեսական հարաբերությունների բազմակողմանի ուսումնասիրությունը զգալիորեն նպաստում է հայ ազատամարտի ռուսաց կողմնորոշումը և Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու պատմական պրոբլեմը ճիշտ լուսաբանելու ու օբյեկտիվ գնահատելու համար։

**М. А. МУРАДЯН—Отражение истории армяно-русских сношений в русской историографии советского периода.**— Проблема истории армяно-русских торгово-экономических сношений относится к числу малоизученной, ибо если армянская советская историография в этой области достигла определенных успехов, то, к сожалению, такой вывод нельзя сделать о русской историографии советского периода. Более того, данная проблема в историографическом аспекте вовсе не изучена, ни русскими, ни армянскими историками.

В данной статье автор поставил перед собой задачу восполнить в какой-то мере этот пробел, полнее и всесторонне осветить историю армяно-русских вековых отношений.

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 70.

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 86: